



Մ ՈՒՐԲ Զ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ



ԽԱՉՎԵՐԱՅԷՆ ԵՏԲ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

18 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	էջ 1
Հոգևոր Զափահասութիւն	էջ 2
Ծանուցում	էջ 4

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳՐՔԷՆ

(20.1-21.6)

Ասորեստանի Սարգոն թագաւորին հրամանով Տարաթան հրամանատարի Ազոտոս գալէն եւ պատերազմով գայն գրաւելէն երեք տարիներ առաջ, Տէրը հետեւեալ պատուէրը տուաւ Ամոսի որդի Եսայիին. «Գնա՛ հագուստդ վրայէդ հանէ եւ հողաթափդ ալ՝ ոտքերէդ»։ Եսայի մարգարէ ըստաւ իր կատարեց եւ սկսաւ մերկ ու բոպիկ պտըտիլ։ Տէրը այսպէս ըսաւ. «Ահա երեք տարի է որ իմ ծառաս՝ Եսայի մերկ ու բոպիկ կը պտըտի։ Ատիկա նշան եւ օրինակ պիտի ըլլայ եգիպտացիներուն եւ եթովպացիներուն համար։ Թող հասկնան թէ ճիշդ այդպէս Ասորեստանի թագաւորը գերի պիտի տանի եգիպտացիներն ու եթովպացիները, ձեր թէ երիտասարդ, բոլորն ալ մերկ ու բոպիկ, իրենց ամօթոյքն ալ բաց, որպէսզի խայտառակուի Եգիպտոսը։ Պարտութեան մատնուած եգիպտացիները ամօթ պիտի զգան եթովպացիներուն համար, որոնց վրայ դրած էին իրենց յոյսը. որովհետեւ եթովպացիներն էին Եգիպտոսի վրայ իշխողը։ Այն օրը փղշտացիները պիտի ըսեն. «Մենք ասոնց օգնութեան ապաւինած էինք, մինչդեռ ասոնք նոյնիսկ իրենք զիրենք չկրցան ազատել Ասորեստանի թագաւորէն. մե՞նք ինչպէս պիտի ազատինք»։

Բարեկոնի վերաբերող պատգամը.-

Անապատէն անցնող մըրիկի պէս փոթորիկ

մը կու գայ ահա անապատ երկրէն։ Ահաւոր է տեսիլքը, եւ ինծի յայտնուածը՝ սարսափելի։ Ահա աւերողը կ'աւերէ, անիրաւողը կ'անիրաւէ։ Տեսիլքիս մէջ ելամացիները վրաս յարձակեցան, պարսիկ պատգամաւորները իմ վրաս եկան։ Փոխանակ գիշերը հանգիստով անցընելու, հեծեցի. սիրտս դողով լեցուեցաւ, երկունքը զիս բռնեց ծննդական կնոջ մը պէս։ Կծկուեցայ որ չլսեմ, ջանացի չտեսնել. միտքս մոլորեցաւ, շփոթութեան մէջ ընկղմեցայ եւ վախը զիս պատեց։ Տեսայ խնճոյքի սեղան մը դրուած. կ'ուտէին ու կը խմէին, մինչ անդին դէտեր պահակ կեցած էին։ Եւ ահա լսուեցաւ. «Ելէ՛ք, իշխաններ, ձեր վահանները առէք»։ Եւ Տէրը ինծի ըսաւ. «Գնա դո՛ւն ալ անձամբ դէտ կեցիր, եւ ինչ որ տեսնես՝ պատմէ»։

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ

(4.3-18)

Որքան ատեն որ հոգեւորապէս անչափահաս էինք՝ բնութեան ոյժերուն կենթարկուէինք ու կը ծառայէինք։ Բայց հիմա յարմար ժամանակը հասած համարելով, Աստուած աշխարհ զրկեց իր Որդին որ մարդկային մօրմէ մը ծնաւ եւ Մովսիսական Օրէնքին տակ ապրեցաւ, որպէսզի մեզ օրէնքին գերութենէն փրկէ եւ Աստուծոյ որդիներ դարձնէ։ Արդ, որովհետեւ իր որդիներն ենք՝ Աստուած մեր սիրտերուն մէջ զրկեց իր Որդիին Հոգին, որով զԱստուած «Հայր» կը կոչենք։ Ուստի այլեւս ծառայ չէք, այլ որդի. եւ քանի որդի էք՝

Աստուած մեր սիրտերուն մէջ զրկեց իր Որդիին Հոգին, որով զԱստուած «Հայր» կը կոչենք։

Աստուծոյ խոստումը պիտի ժառանգէք:

Ճիշդ է որ նախապէս երբ զԱստուած չէիք ճանչնար՝ չաստուածներու կը ծառայէիք: Բայց հիմա որ զԱստուած ճանչցաք եւ մանաւանդ Աստուած ալ ձեզ ճանչցաւ, ինչպէ՞ս կրկին կը վերադառնաք բնութեան տկար ու խեղճ ոյժերու պաշտամունքին եւ վերստին կ'ողգէք անոնց ծառայել. յատուկ կարեւորութիւն կու տաք որոշ օրերու եւ ամիսներու, որոշ ժամանակներու կամ տարիներու: Կը վախնամ որ ձեզի համար տարած ամբողջ աշխատանքս զուր անցած ըլլայ:

Կը խնդրեմ, եղբայրներ, ինծի պէս եղէք, որովհետեւ ես ալ ժամանակ մը ձեզի պէս էի:

Ձեզի դէմ բնաւ գանգատ մը չունիմ: Ընդհակառակը, հարկաւ կը յիշէք թէ սկիզբը երբ աւետարանը ձեզի քարոզելու եկայ, տկար էի մարմնով. եւ հակառակ անոր որ հիւանդ վիճակովս փորձանք եղայ ձեզի, չանարգեցիք զիս, ոչ ալ արհամարհեցիք. այլ զիս ընդունեցիք այնպէս՝ ինչպէս Աստուծոյ հրեշտակը կամ Յիսուս Քրիստոսը պիտի ընդունէիք. եւ ուրախութեամբ ըրիք ատիկա: Հիմա ի՞նչ պատահեցաւ: Կրնամ վկայել ձեզի համար, որ եթէ կարելի ըլլար՝ ձեր աչքերը կը հանէիք եւ կու տայիք ինծի: Միթէ ճշմարիտը խօսած ըլլալու համար թշնամի՞ եղայ ձեզի: Մի՛ կարծէք թէ ձեզի հանդէպ մասնաւոր հետաքրքրութիւն ցուցաբերող մարդիկը ձեր բարիքը կը խորհին: Ո՛չ: Անոնք կ'ողգեն ձեզ ինձմէ բաժնել, որպէսզի ամբողջութեամբ իրենց հետեւիք: Բայց երանի տեւաբար բարիին նախանձախնդիր ըլլայիք, եւ ոչ միայն երբոր ես ձեր մէջ ներկայ եմ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ

(4.14-24)

Յիսուս Գալիլիա վերադարձաւ Սուրբ Հոգիին զօրութեամբ, եւ ամբողջ գաւառին մէջ իր համբաւը տարածուեցաւ: Անոնց ժողովարաններուն մէջ կ'ուսուցանէր՝

արժանանալով բոլորին հիացումին եւ գովասանքին:

Եկաւ Նազարէթ քաղաքը, ուր մեծցած էր, եւ իր սովորութեան համաձայն Շաբաթ օրը ժողովարան գնաց: Երբ ոտքի ելաւ կարդալու օրուան ընթերցուածը, իրեն տուին Եսայի Մարգարէին գիրքը: Բացաւ եւ գտաւ այն տեղը ուր կ'ըսէր.

“Տիրոջ Հոգին վրաս է. որովհետեւ օծեց զիս եւ դրկեց՝ աղփատներուն փրկութեան աւետիս տալու, սրտաբեկները մխիթարելու, աւետելու՝ թէ գերիները պիտի ազատագրուին, կոյրերուն աչքերը պիտի բացուին, հարստահարուածները պիտի ազատին. եւ յայտարարելու թէ ահա հասած է ժամանակը երբ Տէրը պիտի փրկէ իր ժողովուրդը”:

Ապա գիրքը գոցեց, տուաւ պաշտօնեային եւ նստաւ: Ժողովարանին մէջ գտնուողներուն բոլորին աչքերը իրեն սեւեռած էին, երբ ըսաւ. «Այս մարգարէութիւնը որ դուք լսեցիք, ահա այսօր իրականացաւ»: Ամէնքն ալ տպաւորուած էին իրմէ, եւ հիանալով անոր շնորհալի խօսքերուն վրայ, կ'ըսէին. «Այս մարդը Յովսէփի որդին չէ՞»: Յիսուս ըսաւ. «Անտարակոյս ինծի պիտի ըսէք հետեւեալ առածը. “Բժի՛շկ, դուն քեզ բժշկէ”»: Եւ պիտի ըսէք. “Ինչ որ լսեցինք թէ գործեր եսկափառնաումի մէջ, այստեղ՝ քու քաղաքիդ մէջ ալ կատարէ”»: Եւ աւելցուց. «Բայց դուք ալ գիտէք, որ մարգարէն իր ծննդավայրին մէջ յարգ չունի»:

ՀՈԳԵՒՈՐ ՉԱՓԱՀԱՍՈՒԹԻՒՆ
ԳԱՌՆԻԿ Ք.Գ.

«Որքան ատեն որ հոգեւորապէս անչափահաս էիմք՝ բնութեան ոյժերուն կ'ենթարկուէիմք ու կը ծառայէիմք»,
Գղ 4.3:

Ո՞վ է Հոգեւորապէս չափահասը:
Բայց նախ՝ ի՞նչ կը հասկնանք, երբ «չափահաս» բառը կը գործածենք:

Ըստ բառարանային բացատրութեան մը՝ այն տարիքը ունեցող՝ երբ մարդ ընդունակ կը դառնայ ամուսնական կեանքի, կրնայ քաղաքացիական պարտականութիւններ կատարել

եւ քաղաքացիական իրաւունքներ կը վայելէ. նաեւ՝
ընդհանրապէս՝ պատանեկութեան եւ ծերութեան
միջեւ տարիք ունեցող (Մալխասեան): Անշուշտ
այս բացատրութիւնը բաւարար չէ:

Հոգեբանական բացատրութեամբ մը՝ չափահաս
անձը ան է, որ հասած է ինքնագիտակցութեան, կամ
կեանքի բարդութիւնները եւ դժուարութիւնները
հասկնալու կարողութեան, կամ ալ՝ առաւել կամ
նուազ խորութեամբ իմաստութիւն մը ձեռք ձգած
է, եւ տէրն է իր անձին:

Իսկ ի՞նչ կ'ըսէ մեզի բնաբանը:

Պօղոս առաքեալ չափահասութեան հոգեւոր
ընկալումը մեզի կը պարզէ:

Համաձայն առաքեալին, հոգեւորապէս
չափահասը ան է, որ «բնութեան ոյժերուն»
չ'ենթարկուիր եւ անոնց չի ծառայեր:

Սակայն ի՞նչ հասկնալ «բնութեան ոյժեր»
բացատրութեամբ:

Նոր Աշխարհաբար Թարգմանութեան ծանօ-
թագրութիւնը կ'ըսէ. «Ճշգրիտ իմաստը անորոշ է:
Կը թուի, թէ Պօղոս առաքեալ կ'ակնարկէ աշխարհը
ղեկավարող ոգեղէն ոյժերուն», եւ անմիջապէս
համեմատել կը թելադրէ Գղ 4.9-ին եւ Կղ 2.8 եւ
20 համարներուն հետ:

Ծանօթ է, սակայն, որ հին աշխարհին մէջ
բնութեան տարրերուն պաշտամունքը տարածուած
էր: Գաղատիան իբր Փոքր ասիական նահանգ՝
վաղուց արդէն հելլենականացած էր: Եւ այնտեղ
յունական դիցաբանութեան աստուածները կը
պաշտուէին: Այդ դիցաբանութեան մէջ եւս
բնութեան տարրերը եւ ոյժերը անձնաւորուած
էին: Ջանոնք պաշտելու համար կուռքեր կը շինէին
եւ կը փառաբանէին: Հետեւաբար, առաքեալին
բացատրութիւնը կը վերաբերի գաղատացիներու
հեթանոսական անցեալին:

Կուռքերու պաշտամունքը հոգեւոր անչափա-
հասութիւն է:

Իսկ հիմա դարձեալ՝ ո՞վ է հոգեւորապէս
չափահասը:

Գաղատացիներուն ուղղուած նամակը 4.4-7-ը
կ'ըսէ.

1.- Ան որ Քրիստոսը կ'ընդունի իբր Աստուծոյ
Որդին:

2.- Ան որ այդ հաւատքին միջոցաւ Աստուծոյ
որդեգիր դարձած է:

3.- Ան որուն սիրտին մէջ Որդիին Հոգին կը
բնակի:

4.- Ան որ Որդիին Հոգւոյն շնորհիւ՝ զԱստուած
«Աբբա» կը կոչէ: (Այս կոչելը շրթունքային չէ,
այլ սրտագին է: Այսինքն՝ զԱստուած «Աբբա»
կոչողը զայն էապէս կ'ընդունի եւ կը ճանչնայ):
Եւ

5.- Ան որ Աստուծմէ իր որդեգրուածութեան

հաւատքը եւ յոյսը ունի: («Յոյս»ը ըսի՝ որովհետեւ
որդեգրուածութիւնը միանգամըմիջտ տրուած
շնորհք մը չէ, այլ բարոյական ընթացք մըն է դէպի
վախճանական որդեգրութիւնը, երբ Աստուած,
որ Յիսուս Քրիստոսը մեռելներէն յարուցանեց,
իր Հոգիին միջոցաւ «պիտի կենդանացնէ»
հաւատացեալներուն «մահացու մարմինը» - Հո
8.11 - եւ անոնք «Աստուծոյ խոստումը» պիտի
ժառանգեն (Գղ 4.7):

Ինչպէս այս վերջին կէտը յայտնապէս
դրաւ. հոգեւոր չափահասութիւնը հաւատքի
ճշմարտութեան ճանաչում եւ խոստովանութիւն
ըլլալու հետ կամ քովն ի վեր՝ նաեւ բարոյական
ընթացք է:

Ի՞նչ կ'ակնկալուի հոգեւորապէս չափահասէն:

Ապրիլ ո՛չ թէ մարմնաւորապէս, այլ
հոգեւորապէս: Քանի՛ «անոնք որ միայն իրենց
մարմնական պահանջներով կը ղեկավարուին,
անոնց մտածելակերպը մարմնական է. մինչդեռ
անոնք որ Հոգիին թելադրած ձեւով կ'ապրին,
անոնց մտածելակերպը հոգեւոր է: Մարմնականը
խորհիլը մահ կը պատճառէ, մինչ հոգեւորը
խորհիլը՝ կեանք եւ խաղաղութիւն» (Հո 8.5-6):

Հոգեւորապէս չափահասին առաջնորդը
Աստուծոյ Հոգին է (տե՛ս նոյն, հմր 14): Ան ո՛չ թէ
կուռքերուն կ'ենթարկուի եւ կը ծառայէ անոնց,
այլ ինքզինք Աստուծոյ կ'ընծայէ իբր «կենդանի
զոհ» (նոյն, 12.1):

«Կենդանի զոհ»ը ան է, որ

1.- Աշխարհի մարդոց վարմունքը չ'ընդօրի-
նակեր.

2.- Նորոգուած միտքերով նոր մարդ կ'ըլլայ.

3.- Նոր մարդ ըլլալու ընթացքին մէջ՝ կը գիտնայ
Աստուծոյ կամքը եւ կ'ունենայ լաւը ընտրելու
շնորհք-փորձաւորութիւնը.

4.- Մեծամիտ չ'ըլլար, այլ համեստ.

5.- Կ'ըլլայ գիտակից եկեղեցւոյ, այսինքն՝
Քրիստոսի մարմինին անդամներու բազմա-
թրուութեան եւ իւրաքանչիւրի տարբեր պարզեւ
ուսնեալուն.

6.- Իր ստացած պարզեւր առատօրէն կը
բաշխէ.

7.- Անկեղծ է իր սէրը.

8.- Յոյսով կ'ուրախանայ.

9.- Նեղութեանց մէջ կը համբերէ.

10.- Եռանդագին կ'աշխատի. եւայլն (կարգա՝
նոյն, 1-21 համարները):

Հոգեւորապէս չափահասը Աստուծոյ կը նմանի,
կամ ինքզինք կը դնէ Քրիստոս-ճանապարհին
վրայ երկնաւոր Հօր պէս կատարեալ ըլլալու,
այսինքն՝ ինքզինք յանձնելու Աստուծոյ, որ իր
կատարելութեան մէջ կ'ընդունի:

30-ԱՄԵԱԿ
Ս. ՅԱԿՈԲԻ ԿՐԻԱԿԱՆՈՒԵՂ
ԿՐԹԱՐԱՆԻՆ

Հոգաբարձրութեամբ՝
Գրչ. Տ. ԽԱԺԱԿ Ս. ԱՐՔ.
ՅԱԿՈԲԵԱՆԻ
ԱՌԱՋՆՈՐԴ՝
ԳԱՆԱՏԱԿԻ ՀԱՅՈՅ ԹԵԱԻՆ

ԹԷՅԱՍԵՂԱՆ

ԲԱՆԱԽՈՍ՝
ՀԳՇ. Տ. ԳԵՂԱՐԻ ՎՐԴ.
ՔՐԻՍՏԷԿԵԱՆ
(Հ. ՀՈՒԲ Ս. ՊՕՏՈՍ ԵԿԵՂԵՅՈՅ
St Catharines)

ՀԱՅ ԿԵԴՐՈՒՄ Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ ԱՐԱՀ

ՇԱՔԱԹ, 21 ՆՈՅԵՄԲԵՐ 2009-Ի
ԵՐԵՎԱՆԻ ԺԱՐԸ 7.00-ԻՆ


ՏԵՂԵՐԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ՀԱՃԵՅԷՔ ՀԵՌԱՋԱՅՆԵԼ ՀԵՏԵԻՆԵԼ
ԹԻԻՆ
514 331 5445 x202

ՀԻՔԱՆՈՒՆԵՐՈՒ ԱՅԺԵԼՈՒԹԻՒՆ
ԲԱՐԵԿՏԱՆԵՂԷ ԻՆՈՎԱՏԱՅՆԵԼ ԱՐԺ.
Տ. ԳԱՌՆԻԿ ՔԻՆՅ. ԳՈՅՈՒՆԵԱՆԻ.
514 331 5445 x203 կամ 514 909 5203 քիիին:

ԼՈՅՍ ՏԵԱՒ

«ԲԱՆ ԵՒ ԳԻՐ» ՄԱՏԵՆԱՀԱՐ ԹԻԻ 6

ARAM I
DIALOGUE WITH THE YOUTH



DIALOGUE AVEC LES JEUNES

Traduction française par
Daniel Racine

MONTREAL 2009

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ՝ ՁՐԻ
ԱՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ
ԿԸ ԽՆԴՐՈՒԻ ԱՆՁԱՄԲ ՆԵՐԿԱՅԱՆԱԼ
ԵԿԵՂԵՅՈՅՍ ԳՐԱՏԵՆԵԱԿ

ՆԱԽՈՐԴ ԹԻԻԵՐԸ ԿՐՆԱՔ ԳՏՆԵԼ
www.sourphagop.org/lradou
ԿԱՅԷԶԻՆ ՎՐԱՅ

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ
Ս. ԳԻՐԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
ՇԱՔԱԹ 24 ՀՈԿՏԵՄԵՐ 2009
ԵՐԵՎԱՆԻ ԺԱՐԸ 7.00-ԻՆ
ՄՈՆԱԹԵԼԻ ՀԱՅ ԿԵԴՐՈՒՄ
ՀՈԳԱՔԱՐՁՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԱՍՐԱՀ